ամենաընտիրն է, Շեռեանայ ձախ ափի գիւղօրէից մի-
ջավայրը գտնուած գիւղօրէից մին է. տեսարանը
ի հիւսիսոյ լայնածաւալ և արևմտեան հիւսիս տա-
րածուած է Շեռեանայ գլխու, Ջեռկանայ, Խոշեանայ,
և Մօլլա-սիւլէյմանայ . . . դաշտն և որոց ետև Խա-
լեազի լեռներն ձգուած ցՍուկաւէտ. ի հիւսիս տա-
րածուած կայ Շամեան, Մսուրի, Մօլլա-սիւլէյման և
Թ. գալէի դաշտագետինն և սորա ետև բարձրացած
կան Սուկաւէտ, Խոփուզ և Շահկեօլ լեռներն, իսկ
յարևելս տեսարանը շատ երկար է, կանցնի Զլկանի, Բլուր,
Քարձոր . . . բազմաթիւ գիւղօրէից վերայէն, նաև ամ-
բողջ Դարա-Քիլիսէ գաւառի դաշտագետնոյն վերայէն,
որ և սորա ետևն կը բարձրանայ Սինակի ընդարձակ
լեռներն և այս լեռներու ետևէն ևս բարձրացած կը
տեսնուի Մասիս լեառն։

Դաւոյ գիւղի մէջն եմք, մեր շուրջն բազմաթիւ
քաղցրահամ աղբերակունք կը ծորեն կամ վեր վեր կը
ժայթքեն և կամ հանդարտ վեր վեր կը գլգլան. սեաւ
հողի մէջ զուլալ ջրեր, ջրերու ափը հասակաւոր կա-
նաչագոյն խոտը, տեղ տեղ ուռի և բարտի ծառներ,
սակաւ իմն ի խոնարհ, ընդ մէջ գիւղիս և Շեռեանայ,
յափունս Շեռեանայ երիզաձև երկարացած պիտի տես-
նես մի նեղ և երկար գետին ջրի ընթացքին հետ. սա
հասակաւոր խոտ ունեցող մարգագետին մի է, գոյնզգոյն
ծաղկունք մի ակնթարթի մէջ տեսութեանդ ներքև
ընկած՝ հիասքանչ աւիւն մի կը ներշնչէ ի քեզ բա-
նաստեղծ մի դառնալ։ Անցած եմ ասոր 1880—83—
85 թուին, դեռ յիշողութեանս մէջ կենդանի տպաւո-
րութիւն մի թողած է այս հիասքանչ վայրն, դեռ
կարծեմ թէ ձիովս խոտերու մէջ թաղուած առաջ